

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պահանջուեց Տ. Տ. Աշոտ, Մեսրոպ և Եփրեմ եպիսկոպոսների և Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի ծառայութեանց ցուցակները։ 4 դեկտեմ. թ. 1592։

Կոնդակ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի անունով, որով յանձնարարուեց, սահմանուած կարգի և կանոնի համաձայն, Երուսաղէմի Պատրիարքի ընտրութիւն նշանակել, որպէս զի սրբոց Յակոբեանց ս. Աթոռը թափուր չմնայ երկար ժամանակով։ 5 դեկտեմ. թ. 1617։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նոր-Նախիջևանի Տ. Մարտիրոս աւագ քահանայ Դանձապետեանին ուղարկել Նորին Սրբութեանը հանգուցեալ Սարգիս Խըրճեանի կտակի պատճէնը։ 6 դեկտեմ. թ. 1618։

Կոնդակ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի անունով, որով ուղարկուեց Նորին Սրբութեան անդրանիկ Օրհնութեան կոնդակները և յանձնարարուեց կարդադրել կարդալ մայրաքաղաքի և առաջնորդանիստ քաղաքների և գիւղերի եկեղեցիներում։ 7 դեկտեմբ. թ. 1621։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Նոր-Ջուղայի Առաջնորդական Խորհրդարանին Նորին Սրբութեան անդրանիկ Օրհնութեան կոնդակից 4 և պատճէնից 100 օրինակ՝ թեմի եկեղեցիներում կարդալու համար։ 12 դեկտ. թ. 1643։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Ատրպատականի Առաջնորդական Փոխանորդին Նորին Սրբութեան անդրանիկ Օրհնութեան կոնդակից՝ թեմի եկեղեցիներում կարդալու համար, իսկականից 1 և պատճէններից 100 օրինակ։ Ամերիկա Արսէն վարդապետ Վեհունուն և Ուստրի եկեղ. վարչութեան՝ իսկականից 5 և պատճէններից 20 օրինակ։ 12 դեկտեմբ. թ. թ. 1644 և 1645։

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի կենդրոնական Ուսումնարանական Յանձնաժողովին դիւանի թ. 81/1912 գործը՝ որի մէջ անփոփուած են Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչ ուսուցչուհիների մինչև այժմ ստացուած վկայականների պատճէնները՝ ընդհանուր ուսուցչական ցանկ կազմելու համար։ 12 դեկտեմբ. թ. 1647։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի կենդրոնական Ուսումնարանական Յանձնաժողովին Երևանի Փոխ-թեմական ներկայացրած նոյն թեմի եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչ ուսուցչուհիների ուսման վկայականների պատճէնները։ 14 դեկտեմբ. թ. 1672։

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով հաստատուեցան Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան պաշտօնում՝ պ. պ. Աղէքսանդր Պապովեան, Նազարէթ Տիգրանեան, Սահակ Լիսիցեան, Նիկողայոս Կաճկաճեան,

Դաբրիել Կաֆեան, Համբարձում Մելիքեան և Յակոբ Ալիխանեան և անձնափոխանորդութեան պաշտօնում՝ պ. պ. Գարեգին Գարտիշեան, Մ. Մուշայեան և Մ. Մնացականեան, իսկ վերաստուգիչ յանձնաժողովի անդամութեան պաշտօնում՝ պ. պ. բժշ. Տիգրան Թադէոսեան, Գրիգոր Սարեան, Սիմէոն Շահվերդեան, Ս. Աւագեան և Հայկ Տէր-Աստուածատրեան։ 18 դեկտեմբ. թ. 1675։

Երջաբերական կոնդակներով ուղարկուեց Երևանի, Տփխիսի, Ղարաբաղի և Բեսսարաբիայի Հայոց հոգևոր թեմական դպրանոցների հոգաբարձութեանց ժամանակաւոր դասաբաշխումն և պատուիրուեց յանձնել թեմական դպրանոցների մանկավարժական խորհուրդներին, որպէս զի այդ դասաբաշխման համեմատ ծրագիր կազմեն և մինչև 1913 թ. ապրիլի 10-ին ներկայացնեն Նորին Սրբութեան։ 19 դեկտեմբերի թ. թ. 1677—1680։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց 1913 թ. յունուարի 1-ից ռոճիկ չտալ Տ. Ընձակ վարդապետին, որ Բեսսարաբիայի թեմի Առաջնորդի միջնորդութեան համաձայն կարգուում է Հին-Խրիմի ս. Խաչ վանքի վանահայր։ Պատուիրուեց կարճել Տ. Հմայեակ վարդապետ Տէր-Սարգսեանի ռոճիկը, որ չէ կատարում իւր միաբանական պարտականութիւնը։ 21 դեկտ. թ. 1784։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Շամախու Առաջնորդին թոյլ տալ Ղազարոս քահանայ Յովսէփեանին, իւր ներկայացրած ծրագրի համաձայն, բանալ Բագուում հայկական ձայնագրութեան և հոգևոր երաժշտութեան դպրոց։ 25 դեկտեմբ. թ. 1814։

Կոնդակ ընդհանրական Ատրպատականի թեմի հայ ժողովրդի անունով, որով ծանուցուեց Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի առաջնորդ կարգուելն և յորդորուեց աջակցել նորահաստատ առաջնորդին բարեկարգելու եկեղեցական, վարչական, կրթական և այլ գործերը։ 26 դեկտեմբերի թ. 1841։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց տալ Մայր Աթոռի գանձարանից փոխարինաբար Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս Մելիք-Թանգեանին ռոճիկ մի հազար երկու հարիւր ռուբլի մի տարով միայն, ինկատի ունենալով թեմի այժմեան անտեսական աննախանձելի վիճակը։ 26 դեկտեմբ. թ. 1842։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի անունով, որով կարգուեց Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդ։ 26 դեկտեմբ. թ. 1843։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց կարգել Մայր Աթոռի միաբան և Սինոդի գանձապահ Տ. Մուշէ վարդապետին Մայր Աթոռի Վանական կառավարութեան նախագահ և Զանգու գետից ջուր հանելու Ցանձնաժողովի վերահսկիչ։ 28 դեկտ. թ. 1845։

Կոնդակով առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ Վրաստանի թեմի վիճակային արդիւնքից գրականագէտ հանգուցեալ Ղազարոս Աղայեանի այրի Նատալիային ցմահ տարեկան 200 ռուբլի նպաստ։ 28 դեկտ. թ. 1846։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանի անունով, որով կարգուեցաւ «Արարատ» ամսագրի պատասխանատու խմբագիր։ 28 դեկտեմբ. թ. 1850։

Կոնդակ Բեսարաբիայի Առաջնորդի անունով, որով հաստատուեցան Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ պ. պ. Յովակիմ Խամբարեան, Արգար Դերիջանեան, Մովսէս Բերբերեան, Մարտիրոս Նազովալեան, Գրիգոր Զալխուշեան, Գէորգ Ռէիզեան և անձնափոխանորդութեան պաշտօնում՝ պ. պ. Խաչատուր Խալիփաչեան, Ներսէս Ստեփաննոսեան և Սահակ Մեանիքեան։ 28 դեկտեմբ. թ. 1851։

Կոնդակով առաջադրուեց Սինոդին ուղարկել Մայր Աթոռի գանձարանից Բամանովների թագաւորութեան

300-ամեակի Յոբելեանի յուշարձանի շինութեան օգտին 300 ռուբլի նպաստ։ 28 դեկտ. թ. 1856։

Երկաբերական կոնդակներ Ռուսաստանի Հայոց թեմական առաջնորդների անունով, որոնցով առաջադրուեց կարգադրութիւն անել, որ 1913 թ. փետրուարի 20 և 21-ին հանդիսաւորութեամբ տօնուի Օսմանոմների թագաւորութեան 300-ամեակը, կատարելով նաև հանդիսաւոր հոգեհանգիստ և դոհացողական ժաղովանք բոլոր եկեղեցիներում, կազմակերպել դպրոցական հանդէսներ և թեմական դպրանոցների և ծխական դպրոցների աշակերտներին երեք օրով ազատել դասաւանդութիւնից։ 28 դեկտեմբերի թ. թ. 1857-1862։

Կոնդակ Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս վարդապետի անունով, որով թոյլ տրուեց առաջնորդարանի օգտին Ռուսաստանում ապրող հարուստ Պարսկահայերից դրամական օգնութիւն խնդրել։ 28 դեկտ. թ. 1876։

Կոնդակ Երևանի Կոնսիստորիայի անունով, որով թոյլատրուեց քահանայագործել Սարգիս քահանայ Տէր-Գէորգեանին Ֆերս գիւղում և Գէորգ քահանայ Քաղցրիկեանին Ճալա գիւղում։ 30 դեկտ. թ. 1877.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակ Տփխիսի Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու միաբան Գէորգ քահանայ Մեհրաբեանի անունով, որով թեմի ժամանակաւոր կառավարչի և ծխականների միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 4 դեկտ. թ. 1616։